

ବ୍ୟାକ୍‌ରୀତି ପାଇଁ

ଏହାକିମଙ୍କଣରେ

ଶାନ୍ତିକାଳରେ

କାହାରୁକୁ କାହାରୁକୁ

**TO PRESENT DREAMS OF EMOTIONS  
TO THE NOISY RAIN**  
Selected poems in the Armenian Language

by  
**SONIA BALASSANIAN**

Copyright © 1991 by Sonia Balassanian

Library of Congress Catalog Card Number: 90-084459  
International Standard Book Number: 0-9608388-2-1

Published by:  
Sonia Balassanian, 81 Murray Street, New York, NY 10007, USA.

Printed in the USA

Խմբագիր՝ Եղուարդ՝ Պալասանեան  
‘Նկարիչ՝ Սոնիա Պալասանեան  
Գեղարվեստական Ձեւաւորում՝ Արմեն Կարապետեան  
Խմբ. Խորմրդասոն՝ Ժիրայր Աթթարեան  
Գրաշարութիւն՝ Թայփոգրաֆիքս  
Տպագրութիւն՝ Թատիշ

ԱՌԵՎ  
ՊԱՐՍՈՂԱՆԵՐ

ՅՈՅԶԵՐԸ ԼՅԻՒ  
ԵՐԱՋԵՐԵՐԸ  
ՊԱՐԳԵՐԱԿԱՑ  
ԱՌԵՎԵՐԸ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ



ՆԻԽ ԵՈՐՔ, Ա.Մ.Ն.  
1991

Նույնականացնելու  
համար առաջարկված է հայտադիրություն

ԵՐԲ ՓԱԿՈՒՄ ԵՄ ԱԶԹԵՐՍ	95
ՃԱՔՈՒՄ Է ՄԻ ՆՈՒՇ	115
ԶԿՆԵՐԸ ԵՐԿԻՆՔ ՉՈՒՆԵՆ, ՅՈՂ ՉՈՒՆԵՆ	143
ԿԱՐՄԻՐ ԲՈՑԵՐԻ ԾՈՒՑԱՆՆԵՐԸ	167
ՅՈՂ, ԳՐԿԻ՛Ր ԻՆՉ ԶՈ ԹԵՎԵՐՈՎԿ	177
ԵՐԳԻ՛Ր ԱՂՈԹԵԼՈՒ ՓՈԽԱՐԵՆ	185

Նզմել, պատառուտել խոհերը ինն,  
Զգաստությամբ հեռանալ տնից,  
Քայլել մինչև առավոտ,  
Ու բռնոր էությամբ  
                  թափանցել կյանքի տեսչերը...  
Հույզերը լցված երազներով՝  
                  պարզել աղմկոտ անձրևին...  
Բացել էջը առաջին,  
Ցանել ցորենի հատիկներ  
Ու սպասել հողի բարիքներին:

Սնվել կարով,  
Փոքրանալ, դառնալ մանուկ,  
Տանիքի ծուխը խառնել կապույտ երկնքին,  
Դիսել նախիքը արածելու ժամին,  
Բացել Էջը առաջին,  
Լսել աղմկոտ անձրևի տարափը  
ցորենի հատիկների վրա  
ու խառնել բարիքները հողի:  
Թանձրանալ գետափին  
Ու կծկվել հույզերի լեցուն անոթում...



ԵՐԲ ՓԱԿՈՒՄ ԵՄ ԱՉՔԵՐՈ

Երբ փակում եմ աչքերս  
Մաղվում են մեղեդիներ  
գույներ ու գույներ...  
Մայրս արևը ինձ խաղընկեր էր դարձրել,  
Մազերիս ցանել էր աստղեր,  
Խաղում էի հրեղեն նժոյզների հետ,  
Չնզում էր երջանկությունը բոլոր անկյուններից,  
Տաճարները խաղասրահ էին դարձել,  
Երջանիկ էի...

Մի օր արթնացա,  
Պարտեզի ծառերը հուզված  
ճոճվում էին վախից,  
Անձրևը բակում էր տերևները  
բաց ճիպոտներով,  
Քարկոծվում էին դաժան  
բռչունները բակի,  
Պարտեզի հողը ճարել էր ցավից...

Օգոստոս, 1985

**Առավոտ:**

**Թեղուն լույսը ցատկոտում է**

**ցորենի արտի վրա:**

**Ես հավատում եմ**

**Դեռ կան թեղուն ցորենի արտեր**

**հրաշքի մեջ բաղված:**

**Մշուշի մեջ կան կաղնիներ հին,**

**Նրանց ճյուղերին դեռ երգում են**

**հազարան բլրութեր:**

**Կա հովիտում սևաթափիշ աչքերով եղնիկ:**

**Սև մուժի մեջ տիրում է**

**հավերժի վախը:**

**Երկինքը կանգնած բլրակի շրթին**

**Հավաքել էր արևի ծիծաղը ափում**

**Բոցկտում էր գույների մեջ...**

**Ցորենի արտը**

**Նազպարում էր մշուշում:**

**Հացի բույրը բռնիրից դուրս պրծած**

**Վազում էր կավե փողոցներում**

**Նախիքը կանգնել էր արոտատեղում, քարացած:**

**Սրինգի երգը թրթում էր կանաչի վրա**

**սարեսար ընկնում, մարվում քարերին:**

**Երեկոն հանդարտ մոտենում էր կտրի ափին:**

**Թռկից կախել էին լվացքը**

**Հովք մաղվում էր գյուղի վրա:**

26 հուլիսի, 1986

**Գոմ**  
**Կով**  
**Տաք**  
**Գոլորշի**  
**Մսուր**  
**Մի մանուկ**  
**Տաշտի մեջ**  
**Մերկ:**  
Կով, կարմիր կով,  
սև կով:  
Գյուղ,  
Գիշեր, սև գիշեր:  
Քամին խառնում է կալը  
Կալը կալսվում է:  
Ականջը սեղմել է կավե հատակին  
Կովերի շնչառությունը լսելու համար:  
Կովերի շնչառությունը խառնվում է քամուն  
Քամին կանչում է  
Կալսում է կալը  
Փոքորիկ է դուրսը:  
Մանուկը երազում է տաշտը  
Ինքը տաշտում, մերկ:  
Քամին ապտակում է կավե կոռուրներն ու  
կոռորում շարված տաշտերը:  
Քամին հավաքել է ցախը կալի կենտրոնում,  
ճոճվում է, փաթաթվում իր շուրջ:  
Գոմում ծնվում է մի հորբ,  
**Մերկ:**  
Բորիկ մանուկը նայում է նրան:

Սրինգը աղբյուրի ջրի պես պարզ երգեց,  
Ոչխարը կռացավ, համբուրեց հողը,  
Գաշտը արտացոլվեց աչքերում.  
Լեռներում, հովիվը կապկպեց ցախը,  
**Գլորեց ցած:**  
Ոչխարը բացեց աչքերը, նայեց հանգիստ,  
Նորից համբուրեց հողը:

Ապրիլ, 1986

Հովիսի 26, 1986

Խուլ կախարդանքը  
Ստվարանում է ծառերի շվարի տակ:  
Աղավնին կոցահարում է ծառը,  
Քորենիները ոռնում են:  
Փետրաբափ բազեն  
Ավելի է կառչում ծառի բնին:  
Անտառը գունատվում է...

Հե՛յ, հե՛յ, հե՛յ..  
Գցել եմ սիրտս լեռներում  
Մնացել եմ առանց սիրտ:  
Կապել են թելերը մետաքսե  
Կապույտ ու կարմիր  
Զարդարել են մարմինս:  
Մառախուղը ճեղքել է լեռը  
Զայնս զարկվել է լեռան կրծքին  
Քարը խփվել է հոգու  
Հե՛յ, հե՛յ, հե՛յ...

Կիրակի է,  
Կանաչ կիրակի,  
Ժամում պատարագ կա,  
Շղբայում են ինձ հողին:  
Զայնս լեռներում է:  
Զարդարել են ձեռքերս շուշաններով  
Վզիս կախել մի անծանոք ձայն:

Արտը և ես խոսել սկսեցինք  
Նա պատմեց ինձ մի հերիաք:  
Արշալույսին բեղմնավորեցի  
Երկինքը լույսով:  
Գույների մի շատրվան  
Ժայռքեց երկնքից  
Բլրակը ժատաց:  
Առավոտը իջավ  
Կանգնեց արտի եզրին:  
Աղբյուրի ափին  
Քուսած կանաչը  
Ողջունեց ինձ բաց գրկով:

Ամառ է,  
Գիշերը զով,  
Մութը մտել է կարասների մեջ  
դուրս չի գալիս:  
Կուժերը շարված են պատշգամբում  
լիքը ջուրով:  
Հորեղբայրս բերականություն է  
դասավանդում եղբորս:  
Մայրս ականջը սեղմել է լուսամուտին  
Հորս ոտնաձայնին է սպասում:  
Հայրս կանգնել է այգում  
Մտրակում է մի ձի,  
Կարմիր ձի:  
Քույրերս քչիչում են,  
ծիծաղից բուլանում:  
Զուրը եռում է կրակի վրա,  
Մայրս ոտնամանները շարում է դռան շեմին  
Աչքերը սրբում է բաշկինակով:

Հիվանդապահուիին սեղմում է ձեռքս,  
Ուղեղումս մխրճվում է մի բարակ ձայն,  
Դրսում մուր է,  
Անձրես կանգ է առել:

Մութը դուրս է գալիս կարասներից  
Մորս ձայնը մնացել է ապակու վրա:  
Հայրս հեծել է ճերմակ ձի,  
Քշում է դեպի գյուղ:

Հունվար 1987

**Մի տուն**  
Հին մի կամուրջ  
Հուշ:  
Թերև մի ստվեր  
Մի մանուկ  
Վզին կապույտ քար:  
Պատից պատ է վազում  
Պատից պատ պարում  
Խփում է ափը պատին  
Իմ սրտին:  
Դրշմում է ափը պատին  
Ծամածում դեմքը...  
  
Երազում եմ  
Կանաչ գույները,  
Մրմնջում եմ,  
Զեռքով անում:  
Կանչում եմ նրան,  
Ծիծաղում  
Մի բուռ  
Թաքուն:  
Ափս սեղմում եմ պատին:  
  
Մի հին կամուրջ,  
Մի հին տուն,  
Հսկա մի երկինք:

**Խոսի՛ր**  
Խոսիր հարազատօթեն:  
Մի վերցրու ինձնից իմ երազը,  
Խոսի՛ր, լսեմ քեզ:  
Հոգնած ձայնի շնչասպառ է անում ինձ,  
Խոսի՛ր, որ հիշեմ՝  
                գետակը կանաչ  
                տաճիքները գյուղի,  
                հին ջրաղացը:  
Թող քաց մնա դուռը,  
Որ զգամ քո շունչը:  
Զեռքերս կրնեմ քո ձեռքերի վրա,  
Որ ուժ առնեն ինձ հետ պարելու համար:  
Ափիդ տաքությունը կլցնի սենյակը:  
Խոսի՛ր, որ տեսնեմ  
Նարնջի խտացած գույնը  
Գյուղի դաշտերի և այգիների վրա,  
Ցորենի գույնը ողողված սենյակի մեջ:  
Խոսի՛ր, որ հիշեմ  
Զիերի վազքը բլուրի վրա...  
  
Փետրվար, 1987

**Աչքերս բռունցքիս մեջ**

**Երազում էի կանաչ մարզագետինը:**

**Հոգուս մեհյանում**

**Աչքերը աղերսող ոչխարի**

**Նայում էին բռունցքիս.**

**Դաշույնը սպասում էր պատի տակ:**

**Կանայք ճվճում էին:**

**Մի աղավնի թառել էր զանգակատան կտուրին:**

**Մսի ծուխը խառնվել էր փոշու հետ,**

**Քջում էին հարևանի հավերը**

**Եվ դեղին որդերից բռնած**

**Վազում էին իրար հետևից:**

**Բլրակի ստորոտում**

**Կանգնել էր մի սև նժույգ**

**Երեխաները ճիպոտում էին անասունին**

**Փարձրանում շալակը, իշնում ներքեւ:**

**Աչքերս ուժգնօրեն սեղմում եմ բռունցքներում**

**Քրտինքը կարում է**

**Հողը դառնում է փոքրիկ ցեխի գնդիկներ:**

**Աղավնին գտել է մի անկյուն,**

**Գլուխը թեքել՝ զանգակատնից**

**Աղոթարանն է դիտում:**

Հուլիսի 24 1989

**Այգին փաթաթվել է մքնչաղի մեջ:**

**Մեկը մահանում է.**

**Չափում են ճերմակ պատաճը,**

**պատռում:**

**Կանայք քչփչում են,**

**Մեկը կանչում է,**

**Մյուսն է կանչում:**

**Խաղողը մնացել է զամբյուղում**

**պատշգամբի վրա:**

**Կարը չի մերվում այդ գիշեր,**

**Թոնիրը չի վառվում:**

**Կանայք չանչում են ինձ:**

**Մայրս, զգույշ վառում է գիշերվա ճրազը:**

**Մի փոքրիկ տղա նետում է քար:**

**Չայրանում եմ,**

**հետո մոռանում:**

**Մի ճերմակ կտավ**

**կախում են լուսամուտից դուրս,**

**Մեկը կանչում է...**

**Դաշտի կենտրոնում կանայք**  
**Հացը քաշում են իրար ձեռքից**  
**Պատում:**  
**Մի մանուկ ծնվում է պատշգամբում**  
լուսնի լույսի տակ:  
Կովերը վերադառնում են արոտատեղից,  
ճանապարհի վրա փոշի է նստել,  
Երեկո է:  
Այգին փակել է դուռը:  
Երեխաները խաղողի ողկոյզներից  
պսակ են սարքել,  
զարդարել իրենց:  
**Մայրս ձավար է մաքրում**  
Վատծո անունը մրմնջալով:  
Կովը բառաշում է բակում:  
Լուսինը կիսվել է մեջտեղից,  
Զեռքերս մեկնում եմ իրեն:  
  
Երազում եմ:  
Լուսինը դրել եմ գլխիս,  
Պարում եմ դաշտում...

**Մանուկ,**  
**Նորածին մանուկ,**  
**Կանաչ ծառ,**  
**Ծառի ծափ,**  
**Ծառողի,**  
**Կանաչ պատուհան:**  
**Մայրս հագել է ծիրանագույն զգեստ**  
**Շրբերը օժել է մեռոն,**  
**Վատղերը կախվել են մեր բակի ծառից.**  
**Ինձ մկրտում են:**  
**Մեռոն,**  
**Օրինանք:**  
**Քույրերս պոկում են հասմիկ,**  
**Արևը բաց պատուհան է,**  
**Այգին երգում է իմ մեջ:**  
**Մի նորածին,**  
**Երկու նորածին:**  
**Մայրս երգում է,**  
**Նշենին երգում է փնջված,**  
**Նշենին ծաղկում է իմ մեջ...**

Օգոստոս, 1986

**Երկրագնդի մի փոքրիկ հողամասում  
Մի տուն,  
Կապույտ պատուհաններով:  
Թոնրատուն,  
Մի եկեղեցի բլրակին կից,  
Աշուն,  
Միրզ,  
Նուշ,  
Միհնգի գուլալ ձայն,  
Քարիք,  
Վատծո տված քարիք,  
Թոնրատուն:  
Հերիաքների աշխարհ...**



ՃԱԶՈՒՏ Է ՄԻ ՆՈՒՐ

**Ճաքել** է նուռը,  
**Մի** աղավնի  
Կտուցը դրել է ավազանի ջրի մեջ:  
**Մի** ուրիշ տեղ  
Թառել է մի ուրիշ աղավնի  
Ծառի չորացած ճյուղին  
Ավազանի հեռավորությունն է չափում,  
Թևերը բափահարում  
Եվ հոգնած շունչ քաշում:

**Մի** շերտ լույս  
Վազում է պատից պատ  
Եվ մի ճիշ արձակում:

**Ճաքում** է մի նուռ  
Ծառի վրա:

**Աստղերը փովել են դաշտի երեսին,  
Դաշտը ծամում է երկնքից մի խուրձ:**

**Ոտքերս կոխում են հողը,  
Հողը տակառին նստած  
Մտածում է աստղերի խաղի մասին:**

**Բանտել են ինձ եզան պես  
Ծահիճի ճանձերի ցանցում,  
Որոճում եմ հողից մի բուռ:**

**Աչքերիս մեջ երկինքը ինքն իրեն կախել է  
կախաղանից,  
Իմ աչքերը թողել եմ հեռվում, եկածս ճանապարհի  
եզրին, քրջվել են անձրևից:  
Խառնվել է ճանապարհի փոշին մառախուղում...**

**Նժույգների մի երամակ սմբակահարում է եկածս  
ճանապարհը, խրխնջում տենդոս...**

**Երկինքը մերկացել է ծովափոշու մեջ,  
Նրա արգանդում  
Աճում են անարմատ կաղճիներ...**

**Ցուլերը մենամարտում են մենաստանում  
Կուոքերը իջեցնում են իրենց գլուխները  
կախաղաններից:  
Հայացքս թերվում է դեպի աղոքարան,  
որտեղ ծնվում են նոր աստվածներ:  
Կորած արեգակները  
Փոշակալ և կրակից այրվող աչքերով  
Նայում են դողացող հողին  
որը ճարել է երկնքի լուրջան մեջ...**

**Պոկվել են մոլորակները  
և փշրվել կեղկում...**

Կոճղացած արմատները ծերացել են  
Ծառը չորացել է հովիտում:  
Փակել է երկինքը իր թաց հոգին,  
Կանաչը չորացել  
ցախ է դարձել...  
Ծառը չորացել է,  
Ժայռն առանց բերան,  
Կամուրջն առանց մեջք,  
Բյուրեղի փշրանքները  
հանգչել են ծարավ անապատում...

Քավության ժամն է հասել  
Խո՛ւնկ ծխեք.  
Խո՛ւնկ ծխեք, որ աստվածուիները  
Արևահամ ստիճներով սնեն նորից՝  
բլրակները ծիծաղեն,  
Կանաչը փնջվի գույներով,  
Կամուրջը կանգնի,  
առավոտը օրինվի...

Թանձրացած կավը քսում եմ մորթիս  
զովանալու համար:  
Այգին սեղմում է մարմինս.  
Ամրացնում եմ մեջքիս գոտին  
Գոզնոցիս մեջ դնում մի նուռ:

Ծղրիդը  
Դրել է բերանը ծառի ականջին,  
Երգում է  
Ծղրիդ, ծղրիդ...

Մեղուների մի հույլ  
Կաշվիս ծակոտիներն է փակել:  
Թանձրացած կավը  
Քսում եմ դեմքիս:  
Կիսում եմ նուռը:  
Փոեք ճերմակ սփոռոցը  
Այգու կանաչ շվաքում:  
Մի ծղրիդ  
Բերանը դրել է ծառին ու երգում...

Բոցի պես պոռքկում է խաղողի ողկույզը,  
Թերքը օծվում է,  
օրինվում,  
Աղոթքի պես հոլովկում է համը լեզվով:  
Խտացած հյութը արյան պես  
լցվում է կոկորդիս մեջ,  
Կարմիր գնդիկները խտանում են:  
Օծվում է մարմինս գիճով:

Բոռնացքը ուժգին թափահարում է,  
Ճեղքում է օդը:  
Ոտքերը մխրճվում են հողի մեջ:  
Աչքերի լույսը խթան  
Կապում է մոլորակներից կախված հրթիռներին,  
Նստում է աստղերի շուրջ տակ,  
Թարախում է ձեռքերը աստղափոշում,  
Սիրտը դնում է նիզակի ծայրին,  
Ու շպրտում արևին:  
  
Շարսում է արևին  
Ու պանում դեպի անհուն:  
  
Հողաշուրք մի մանուկ  
Սովորում է ծամել  
ցորենահացի առաջին պատառը:

**Հեռվում թաղում են:**

**Մի կաքավ խփվում է քարի կրծքին  
Աչքերի լույսի մեջ թրթոում է հոգին  
և լուռ մահանում...**

**Տառապում եմ:**

**Կրծքիս մեջ մեխվել է նիզակների մի խուրձ...**

**Մի փոքրիկ դագաղ մառախուղի մեջ...**

**Մշուշում մոայլ խաչերի շարան...**

**Թներիս վրա մի ճերմակ առաստաղ...**

**Մենաստանում լքված**

**Գծում եմ գծեր  
Գունատ պատերի վրա...  
Սեփական դամբարանում  
Երգում եմ**

**Այր, թեն, Գիմ, Գա:**

**Երկրագունդը կախել եմ**

**Աչքերիս պղտոր հորիզոնում:**

**Նա ձուլվում է**

**Երգերիս շատրվանում:**

**Արձաքե մառախուղում**

**Նկարում եմ գծեր:**

**Ծառերը սարսափով**

**Խփվում են իրար:**

**Հեռվում մի մարդ**


**Զեռքին արևի գունդը**

**Նկարում է անձանոք մի ճանապարհ**

**Եվ մի պատուհան:**

**Երկրագունդը հանդարտ պտտվում է**  
ինքն իր շուրջ.  
**Վայրկյանները սպառվում են:**  
**Ժամանակը չի կանգնում հանգստանալու համար,**  
վազում է շնչասպառ...  
**Երկրագունդը դանդաղ պտտվում է**  
**Դեմքս վառվում է հրդեհից**  
**Մարմինս ձուլվում է**  
ժամանակը վազում է շնչասպառ  
**Վայրկյանները ծիծադրում են, փախչում**  
խելառ մանուկների պես:  
**Դեմքս հրդեհվում է**  
գիշերը այցի չի գալիս  
**Գիշերը շփոթ է, գունատ**  
ժամանակը վազում է արագ:

**Երբ**  
**Թանձրանամ կապույտ մուժում**  
**Եվ անէանամ երկնքի ակունքում**  
**Սրտիս մի կեսը**  
**Թաղեցեք հողափոշում**  
ու նարինջ քամեք շրբերիս  
որ հոգիս հանգչի...  
**Մի ուրիշ գարուն**  
**Բլրակի ստորոտում**  
**Հողը կճեղքվի**  
և կծաղկի մի կակաչ...



Հացը թարախում եմ զինու մեջ ու ծամում  
Ողողում եմ շաղով  
Տորենի և խունկի բուրմունքը  
փաղաքչում են ձեռքերս  
Ձեռքերս դնում եմ հողի մեջ  
Երգերս դառնում են շարական  
դրված հոգուս սեղանի վրա:  
Ցնծում է հոգիս...

Հուլիսի 20, 1985

Իմ տնկած ծառերի շվաքում  
Սրինգը դրել է շրթին,  
Նվազում է:  
Սավառնում է բոցավառ  
Թոշունը երջանիկ:  
Բլրակի քրքիջը  
Աղյուրի ծիծաղի հետ  
Գոյության փլարուն առավոտվա սեմին,  
Հալվում է արցունքի մեջ:  
Բլրակներից վերև  
Երկնքի բյուրեղացած փշրանքների վրա  
Լողում են,  
Կայծկտում  
Մեղեղիները բոլոր...

Դաշույնը պատյանի մեջ սպասում է:  
Ես մտնում եմ բանաստեղծության այզին,  
Ժամանակից դուրս:  
Անորոշ կետերը վագում են իրար հետևից:  
Հեղաշրջված իմ սիրոք  
Առևանգում է լուրջունը:  
Սարսափահար փոթորիկը  
Պոկում է քարաժայոնքի կակաչը:  
Ես փակում եմ դուռը բանաստեղծության:

Մեղմված ծիլը մերկանում է:  
Արևը ծեծում է կուրծքը,  
Ծլարձակում...  
Ճերմակ նավակի մեջ նստած  
Թիավարում եմ կապույտ երկնքում:  
Գլուխս դնում եմ զարնան ուսին,  
Պոռքիում է սիրտս:  
Չուրը կարիլ կարիլ լճանում է ծառի տակ,  
Գարունը բացում է ափը,  
Ես տեսնում եմ:

**Մետաղե լիճը**  
Մութի մեջ բանտում է  
Քայլերիս հետքը...  
Արյանս մեջ  
Թպրտում է կարմիր մի կաքավ:  
Լուսնի ցոլքի մեջ  
Մի երեխա է լողանում:  
Վազում եմ շնչառպառ:  
Գոփում են նժույգները մետաղյա լճի շուրջ:  
Ծառերը բարձրանում են երկինք,  
Աղոթում է հողը...

**Անցնել լոռության ստվերներից,**  
**Նորածին հասկերի պես գունավորվել,**  
**Թողնել ամայությունը պապակված իղձերի,**  
**Նորածիլ հասկերի մի փունջ**  
**Դնել մարդկանց հոգու մեջ:**  
**Հատ-հատ ճառագայթներից**  
**Սիրո պատկերներ հյուսել,**  
**Դառնալ արեգակ,**  
**Արեգակից ավելի թեժ:**

Իրիկնամուտի ցանցը պատռվել է:  
Աստղերը փախել են երկնքից  
      թափվել են քարանձավի շեմքին:  
Մի եղնիկ մահանում է:  
Զարդարենք մարմինը լույսերով:  
Ոտքի հետքերը գծվել են հողի վրա:  
Կարճաժաղիկներով ողողենք աչքերը,  
Թող վճիռ երկնքի գույնը ստանան:  
Քարանձավի խուլ անկյունում  
Մահանում է մի եղնիկ:

Մի խումբ մանուկներ  
Շարում են նստարաններ  
      հուղարկավորների համար  
      ու վազում դեպի լեռ:  
Նրանց աչքերի հորիզոնում  
Մի ծեր արծիվ  
      կարդում է մի հին դատավճիռ:  
Արմատները հին կաղնու  
      դատապարտվել են մահվան:  
Հուղարկավորները ծածկվել են  
      սև բաճկոնների մեջ:  
Փոսր լցվում է:  
Արծիվը թափահարում է թևերը,  
      խորը շնչում  
և սավառնում հեռու...

Հոգուս շունը կրծում է շղթան,  
նայում է աչքերիս, համառ:  
Ժամեր,  
Անհանգիստ ժամեր,  
Քաշում եմ շղթան:  
Քաշում եմ տնից դուրս,  
Վազում ենք փողոց,  
Շունը և ես իրար հետևից,  
Ես՝ շան,  
Նա՝ իմ:

Հոգուս շունը կատաղել է պյոր:  
Թաքերի մեջ է բռնել սիրտս,  
Ծամում է,  
Ծամում:

Հոգուս շունը ծամում է իմ սիրտը,  
Ես՝ նրա...

Մութից լույս,  
Լույսից մութ,  
Խարխափում եմ գույնից գույն  
լույսից լույս...  
Խոսքս տարածվում է սահմանից սահման,  
Թանձրանում են գույները,  
Խոտանում, կոտակվում:  
Ես հարբած եմ,  
Ծիծաղում եմ, թուլանում:  
Խոսքս կարճանում է, կետ դառնում,  
Կորչում է լույսի շերտերում...

**Մեհյանում մորթվում** է մի անասուն,  
Թռչունները շրջվել են գլխիվայր:  
**Հագել եմ սև սքեմ:**  
Երկինքը ծնվել է չմահանալու համար,  
**Մենք մահանում ենք:**

**Մեխվել է աչքս երկնքին,**  
Փորում եմ մի փոս  
ուր պիտի բաղվենք  
ևս և մի անասուն:  
**Հագել եմ սև:**  
**Մոլորակների վրա ապրում են**  
կարմրագույն միջատներ  
իրար շղթայված:  
**Մեհյանի ձայնը խուժել է իմ շուրջ,**  
**Մորթվում ենք ևս,**  
և մի անասուն:



ԶԿՆԵՐԸ ԵՐԿԻՆԸ ՉՈՒՏԵՆ, ՅՈՐ ՉՈՒՏԵՆ

Անկարելի է:  
Տիեզերքը ծով է:  
Միսրամատ եմ գորշ, մամոստ ջրում:  
Զկները անձայն լողում են, խուև  
Մամոստ պատերին դիպչում:  
Հովիտը ծով է,  
Հողը՝ ջուր...  
Զկները շարվել են,  
Հավարվել  
Չրերի խորքում,  
Զկները լուռ ճայում են ծովին,  
Անտարքեր,  
Բարի...  
Աստղերի փոշին թափվել է ծովի  
մոխրագույն մակերեսին  
Ու հանգչել ձկների շրթին:  
Զկները երկինք չունեն,  
Հող չունեն:  
Անկարելի է չսիրել  
Գորշ, ալեկոծ ծովը...

**Քաղաքը քարե,**  
առանց սրբավայրի  
դատարկ:

**Պոռնկատները լրված**  
**Մարմինները հողե**  
հղի  
շպրտվել են կարմիր լույսերի մեջ:

**Առևանգված երկինքը ձգվել**  
Կուացել է ինքն իր վրա,  
Փարաքել է լեզուն վզի շուրջ  
ու լկվել:

**Ստվերների մեջ փոշոտ ճանապարհի**  
երկար,  
անչափելի,

**Մատներիս վառել եմ տասը մոմ:**

Ապրիլ, 1986

**Կացինով խփում եմ ծառի բնին.**  
**Լուռ է: Չի շարժվում:**

**Խփում եմ, խփում:**  
Հուժկու անասունի կատաղի ձայնով բռում է  
Խուլ, խռպոտ,  
Խուլ, խռպոտ:  
Բռում է խուլ...

**Մեկը կտրում է մի ծառ**  
Խուլ, խռպոտ, խռպոտ:  
Բղավում եմ:  
Վսա՛ ինձ, ծառ՝  
Տանս պատի սյուն,  
Այգուս կանաչ ծիծաղ,  
Կծիծաղե՞ս իմ մեջ, ինձ հետ:

**Կացինով խփում եմ տան հիմքին,**  
ի՞մ տան հիմքին:  
Վսա՛, տուն: Իմ տունը դո՞ւ ես:

**Մեկը խփել է տանս պատին կացինով,**  
Հուժկու ձեռքով կտրել է այգուս ծառը,  
զողացել պտուղս:  
Վսա՛ ծառ, տանս սյուն,  
Ինձ հետ կլինե՞ս:

Ավազը խաղաց ոտքերիս տակ  
Խրեցի թաքերս նրա մեջ  
Ծեփվել էր արևի տակ, այրվել:  
Ծովը փռվել էր մեջքի վրա  
Թաղվել էր ավազի և արևի մեջ:  
Խլրտում էր ալիքը նրա երեսին,  
Չինչ էր երկինքը,  
Կապոյտ:

Աչքերս փակեցի  
Մեկուսացա ինքս ինձ մեջ  
Ավազը բափվեց կրծքիս  
Ոտքերիս մատների մեջ...

Փարարվել եմ մետաքսե թելերի մեջ,  
Բոժոժվել եմ ինքս իմ մեջ:  
Քիրերում աչքերիս  
սառել է ամեն հնչյուն,  
Ամեն բացականչություն.  
Ամփոփվել եմ մի տերսի շվարի տակ,  
Մի ծառ շվարել է ճանապարհը,  
Բոժոժները բագնվել են կանաչության մեջ,  
Արևը որոշել է այրել ամեն ինչ:  
Ամառ է  
Տաք,  
Տաք ամառ:  
Ծառերը ծարաված դեղնել են:

**Սրտիս կաքավը**  
Քարեքար է խփում վիրավոր կտուցը:  
Թպրտում է իր արյան մեջ,  
Իմ արյան մեջ:  
Նրա աչքերի սևը ավելի է սևացել,  
Սրտիս մեջ բափահարում է թևերը,  
Խփում է դահլիճների պատերին,  
Վայր է լնկնում,  
Կարմիր բժեր է թողնում պատերի վրա:  
  
Վերցնում եմ կտուցը,  
Դնում եմ շրբերիս,  
Երգում...

Չուկը ձեռքեր չունի,  
Նա միայն լողում է:  
Վերցրու դիմակդ,  
Դու ստվերի մեջ ես,  
Քո շուրջը կարմրագույն մժեղներ են վխտում,  
Քո ստվերը կարճ է:  
Վերցրու դիմակդ:  
Չուկը լողում է ավազանում,  
Նա չի լսի մեզ,  
Ոտքերդ կախիր ջրի մեջ,  
Մժեղները վխտում են քո շուրջ...


**Գայլերի մի վոհմակ**  
**Անտառի և ծովի սահմանի վրա**  
**Ոռնում է ամենի:**  
**Մի արծիվ**  
**Երկնքում**  
**Թափահարում է թևերը,**  
**ճեղքում է օդը,**  
**Սավառնում է հանգիստ,**  
**Գայլերը լուս են,**  
**Նայում են հեռուն արյունոտ աչքերով:**

**Անտառը մոտենում է ձորի փեշին,**  
**Ծառերը ավելի են քաշվում դեպի երկինք,**  
**Արծիվը վերևից նայում է ցած,**  
**Թափահարում է թևերը,**  
**Ալանում, մոտենում երկնքին:**  
**Լուսինը կիսվում է,**  
**Քաժանվում,**  
**Մի մասը՝ ձորում**  
**Մի մասը՝ անտառում...**

**Սահմանում գայլերը ոռնում են**  
**Արյունոտ կոկորդով:**

**Հողաբափերս շեմքին թողեցի,**  
**Թակեցի դուռը երեք անգամ.**  
**Սրտիս ձայնը լսեցի բակոցի հետ:**  
**Քամին հրեց ինձ,**  
**Արյունս ճայթեց,**  
**Հատիկները տեսա**  
**Սենյակի ճերմակ պատերին:**  
**Նրանք ոռնացին գազանների պէս:**  
**Մեջքով դեպի դուռը հետ քայլեցի,**  
**Վազեցի անապատի արևափոշու մեջ...**  
**Պառկեցի տար ավագին**  
**Մեջքս հողի մեջ քաղած:**  
**Ճանաչեցի աստղերի մենակությունը,**  
**Հեռվից լսեցի**  
**Մոռնչը կորած կենդանու...**

Ապրիլ 8, 1986



Վերցնում եմ բնության բոլոր գույները  
Ատարորիկ քայլում ավազի վրա:  
Գույները շաղախսվում են  
    ծովի ալիքների հետ:  
Լսում եմ երեխայի առաջին ճիչը,  
Լարախաղի անիվը  
Պտտվում է անընդհատ:  
Երեխան ծիծաղում է, բրբջում,  
Վազելով անիվի հետևից:  
Վազը քավում է ոտքերիս,  
Զգում եմ տաքությունը:  
Հաճելի է ծովը,  
Անիվի գիծը ավազի վրա...

Հիշում եմ աչքերդ  
    անթարք,  
    անզգա,  
    անգույն,  
    անձանապարհ:  
Հիշում եմ շնչառությանդ ձայնը  
    անհավասար:  
Դրսում քամի է,  
    ողնաշարի վրա պտույտներ է գործում,  
    մոնչում,  
    փնչում,  
    ցնցում:  
Անձրևը քափվում է դեմքիս,  
    մազերիս,  
    մարմնիս:  
Աչքերը անգույն են  
    անկանչ,  
Սենյակը դատարկ,  
Մութ, խավար:  
Ոռնում է քամին,  
Բղավում,  
Քանդում է լույսի կծիկը,  
Ոլորվում իր շուրջ,  
Մի ոտքի վրա կանգնում...  
Երկինքը պատռվում է  
Հրդեհվում,  
Ողնաշարը կոտրված շան պես  
Բղավում,  
Ոռնում...

**Ոչինչ մի պահանջիր:**

**Ես անկարող եմ մատուցանելու  
իմ սրտի աղավնին,**

**Փետրաբափ է նա:**

**Մի խոսիր անցյալի մասին,**

**Գարունը չի ծիծաղում:**

**Սառն է օդը,**

**Երկինքը մոխրագույն:**

**Տարածությունը դատարկ է,**

**Չոր:**

**Ծաղիկների դալկացած թերթիկները**

**Անհավասար թափվել են**

**փոշոտ սեղանի վրա:**

**Մի խոսիր երգի մասին,**

**Երգը զոյտթյուն չունի,**

**Ամայի մի բառ է...**

**Ուրվականներ են նրանք**

**Հոգուդ սեղանի շուրջ,**

**Որտեղ մոմերի վերջին լույսերը**

**մարել են սկսել...**

**Պատերը անպատկեր**

**Ցամաքած կմախքներ են դարձել:**

**Աղբյուրը չորացել է,**

**Քարերը մամոռուել են,**

**Կանաչել:**

**Ոչինչ մի պահանջիր**

**Խոսել չեմ կարող...**

**Անտառի մրջյունը**

**Վերջին հացահատիկն է քաշում**

**Տերևից տերև, ճյուղից ճյուղ,**

**Հասնում է տուն, փակում դուռը հետևից:**

**Քամին փշում է ուռած շրթունքով,**

**Ամպը ոռնում է:**

**Ծառերը թակում են իրար...**

**Մրջյունը ննջում է խաղաղ, անվրդով,**

**վերջին հացահատիկին նստած:**

**Քամին պոկում է մի քար**

**նետում է դռանը,**

**Դուռը ամուր է.**

**Մրջյունը ննջած է խաղաղ...**

Հողակույտը տաքանալ է սկսում,  
Ավազը շարժվում է հանդարտ,  
Քլրակները մոտենում են իրար,  
Պարել են սկսում:  
Ծովը բացում է թևերը,  
Արևը իջնում է բարձունքից,  
Ճառագայթները  
Ծիրանավառ տենդով  
Խարույկ են վառում:  
Աստվածանալու ցանկությունը  
Խլրտում է արյանս քջիջների մեջ:  
Հեշտանքից մերկանում եմ  
Ծովախորշում...

Հոգուս չորացած ճյուղը մի կտրիք  
Նա նորեն կկանաչի:  
Կապույտ հուլունքներով  
Զարդարիք պարանցու  
որ կարողանամ պարել:  
Ուղիղ նայիր աչքերիս մեջ  
Ժամանակը կտեսնես:  
Պիտի քայլեմ քո գծած ճանապարհով:  
ճյուղերս մի դարսիր իրար վրա  
Դեռ չենք չորացել:  
Կրակ մի վառիր տանս մեջ:  
Սրտիս ծաղիկը մի պոկիր:  
Ես քայլում եմ քո գծած ճանապարհով...

Հիշողությանս բարակ փողոցներում  
Թեքև հողափոշին շարժվում է ոտքերիս տակ:

Մի կանաչ դուռ:  
Երկարե բռնիչը սեղմում եմ, բակում:  
Միջանցքից ոտքերի ձայնը մոտենում է,  
Դուռը կրունկի վրա կիսապարում,  
ճռողում, բացվում է:  
Կանաչ գույնը ճարճքել է պատուհանների վրա:  
Ապակիները անձրկից, փոշուց խունացել են,  
վարագույրները դեղնել:  
Մենյակս փոշու մեջ է:  
Նիհար ճյուղերով մի ծառ  
Կանաչել է պատշգամբիս դիմաց:

Վերադառնալ տուն առանց ճամպրուկի,  
Դասավորել դատարկ սենյակը,  
Կյանքի հուշերը մոռանալ,  
Կյանքի մերկությունը չտեսնել,  
Զգալ դատարկ սենյակի ճերմակ լույսը  
ու լացել լուռ:

Մերկանալ մերկ մահճակալում,  
Ծաղկամանի մեջ ծաղիկ չդնել,  
Ցավը չզգալ ուկորներում:

Դասավորել կահկարասին անաղմուկ:

Տանս պատերը տխուր են, որբացած,  
Պատկերները իշել են պատերից,  
Դուռը փակվել է:  
Նստել եմ փողոցի նստարանի վրա  
մի հին թերթ ձեռքիս,  
Նայում եմ տաճն պատուհաններին:  
Մեկը փակել է դուռը, հեռացել:  
Մի շուն վազում է փողոցում:  
Հետ եմ նայում,  
Նայում է ինձ:  
Պատուհանները նայում են:  
Շունը քսվում է ոտքերիս,  
Թաքը դնում է դնչի տակ,  
Նեցում:  
Սրտիս պատերը մերկացել են, որբացել հանկարծ,  
Հիշատակները՝ անհայտացել:  
Սրտիս դուռը փակել եմ,  
Բանալին կորչել է կարծես:  
Նստում եմ շան կողքին,  
Ձեռքս դնում ծնոտիս տակ  
ու քնում...



ԿԱՐՍԻՐ ԲՈՅԵՐԻ ԾՈՒՅԱՆՆԵՐԸ

**Մի ծաղիկ  
Փնջած  
Գնում եմ հոգուս մեջ:  
Կարմիր բոցերի շուշանները  
Տեսիլքի պես փնջվում են մատներիդ:  
Անհունում կանգնում ենք  
Գեմ դիմաց,  
Լեռները ձյունազարդ իրում են մեզ:  
Մրրկաշոնչ քամին  
Վերցնում է մեր ոտքերի ձայները լեռներից  
Եվ արձագանքում...**

Գիշերվա սև շապիկը պատովել է,  
Ասողերը վազում են ոտարորիկ:

Քացի՛ր բոլոր պատուհանները,  
Սրտիս ճերմակ աղավնին նվիրում եմ քեզ,  
Զգոյշ,  
Մի մատուցիր նրան աստվածներին,  
Աստված է ինքը:  
Թող որ լվանամ քո ոտքերը  
      եկեղեցու խորանի առաջ,  
      որտեղ փոշին թանձրացել է:  
Օդը պակասում է,  
Յախը չորացել,  
Քացի՛ր պատուհանները...

Լեզուս լեզվին  
Բերանս բերանիդ մեջ  
Համտեսում ենք  
Ճաշակում, ճաշակվում:  
Մարմինները գալարվում են  
      ճերմակ առավոտվա սեմին:  
Գիշերը վազում է բլրակից բլրակ:  
Լեզուն,  
Լեզուն,  
Լեզունները  
Թարտում են տապի մեջ,  
Թակում իրար, համտեսում,  
Կուրծքը հեռում է,  
Հեռում:  
Գիշերը փակում է ականջը:  
Լուսինը  
Իջնում է ելարանից ցած:  
Մարմինները փաղաքշվում են  
Առավոտյան լույսի մեջ:  
Լեզուն խոսում է:  
Փսխում եմ հարրած:


Օգոստոսի 8, 1987  
Նյու Յորք

Երկու ստվերներ մոտենում են իրար,  
Իրենց հոգու անասուններին  
Թոկով կապել են տանս շեմին:  
Նրանք կանգնել են բարերի վրա,  
Կաղկանձում են  
Ու կրծում տանս սյուները:  
Ստվերները վերցնում են դիմակները:  
Ես ճիպոտում եմ անասուններին,  
Նրանք հեռանում են:  
Կաղկանձը օղակների պես  
շարվում է վզիս:  
Ստվերները կորչում են մութի մեջ...

Ժամանակը կանգնած է դիմացի պատին:  
Դու խոսում ես:  
Սեղմում եմ ականջս ձայնի ապակյա շնչին,  
Ավազը խլրտում է:  
Դու խոսում ես ժամանակի վախճանի մասին,  
Օրերը հագել են ամենօրյա զգեստ,  
Ծառերը ալեկոծված ծովի պես բարերին են խփվում:  
Պատշգամբից նայում եմ փողոց,  
Բոլորը վազում են:  
Ես կարոտում եմ նորածին մանկան ճիչը,  
Դիմացի տան վարագույրները հանել են  
ու կախել են պատշգամբի թոկից:  
Ժամանակը կանգնել է դիմացի պատին,  
մտրակում է օդը...

**Փոշու հատիկը կախվել է  
ճանապարհի միակ ծառին,  
Ստվերը սառել է,  
Աչքերս փակում եմ:  
Երազիս՝ անտառում  
լուսինը փռվել է մերկացած...  
Քացում եմ դուռը,  
Մենյակում հավաքվել է ցեխաջուր,  
Զկները լողում են համբ,  
Ծառը կռանում է ստվերի վրա,  
Ստվերը տաքացած շարժվում է:  
Լուսինը ոտքի է կանգնում,  
Ստիճները սեղմում՝  
Հագնում է մանուշակագույն շղարշ  
Ու փակում դուռը:**

**Արյունոտ լուսինը թաքախել է ձեռքերը  
հողի մեջ,  
Պոկել է ծաղիկը  
շպրտել դուրս  
ու մտել կավե ծաղկամանի մեջ:  
Հողաշուրք մի մարդ  
Կռացել է դեպի լուսին,  
Մոտեցրել է դեմքը դեմքին,  
Հեծկլտում է լուս:  
Երկինքը արնաքարախ իջել է ցած,  
Հասել է հողին,  
Կավին,  
Մարդուն,  
Թաքախել է ձեռքերը հողում  
Ցանում է մի սերմնահատիկ...**



ՀՈՂ, ԳՐԿԻՐ ԻՆՉ ԶՈ ԹԵՎԵՐՈՎ

Հո՛ղ, գրկիր ինձ քո թևերով,  
Ես խաչակնքում եմ դեմքս:  
Հո՛ղ, բափվի՛ր դեմքիս, մազերիս,  
Ես կածեմ քեզնով,  
Կվազեմ քամիների հետևից,  
Փոքրիկների շրջապտույտի հետ  
Կպարեմ:  
Գրկիր սիրոս:  
Թող հանգստանամ մի պահ:  
Զեռքերս հոգնել են,  
Շրբունքներից բառերը անջատվել:  
Սիրոս չի բաքախում:  
Չեմ երգում այլևս:  
Հո՛ղ, բափվի՛ր ինձ վրա:  
Թող քամիները ինձ տանեն,  
Թափեն արտերում  
որ ծլեմ, ծաղկեմ:  
Թևերս գրկիր,  
Սիրոս դիր քո սրտի կողքին,  
Որ կարողանամ հողի համ զգալ:  
Զեռքերով կծափահարեմ ծառերի աճը,  
արևի լույսը.  
Գիշերը կննջեմ քեզ հետ,  
Թափվի՛ր ինձ վրա,  
Սեղմի՛ր, սեղմի՛ր ինձ:

**Քարաժայռերի ցցված մատների  
քարե անտառում**  
**Քարանձավների մեջ**  
**Փնտրում եմ նախնիներիս պատկերը:**  
**Նախիրը**  
**Նստած մոխիրների քանձրացած մուժում**  
**Որոճում է ժամանակից մի բուռ:**

**Ճանապարհ հողե, օձապտույտ  
դեպի Տաթև:**  
**Ճանապարհի եզրին մի մանչ**  
**Սրկի և փոշու մեջ ողողված**  
**Նարնջագույն ծիրան է ժախում**  
**ծիրանե ձեռքերով:**

**Քարանձավների  
Քարե դարպասին  
Փշեպսակ  
Մի թագ:**

**Մի խենքացած մարդ  
Շրբերին ամառվա չորացած փոշին  
Քարից երգ է շինել,  
Քարը չորացել է կոկորդում:**

**Ծիրանե ձեռքերով մի տղա  
Ծիրան է ժախում  
Սրկափոշում կանգնած...**

**Լեռներում անշշուկ մի պատարագ:  
Կորած մի ձայն,  
Վանքի պատերից դուրս:  
Հեռվում, ճանապարհի վրա,  
հուղարկավորների մի խումբ  
ու սրինգի ձայն:  
Լեռներում մի արեղա  
հարբած զինով՝  
Մատուցված ոչխարի արյան հետքերի վրա  
գրում է մի թիվ:  
Մոխիրը խառնվել է թախիծի հետ:  
Տաք աղոքք,  
Խունկի հոտ,  
Մեհյանում մի ոչխար սպասում է  
ճառագայթը աշքերում...  
Մի ձայն կոխարձվում է հուղարկավորների  
ոտքերի տակ:  
Աբեղան նշանակում է մի թիվ:  
Լեռներում կորչում է աղոքքի մի կտոր:**

Դու շատ մոտ ես նրան,  
Քո շունչը դիպչում է նրա շնչին՝ քարին, ձյունին:  
Եթե վազես կհասնես նրան,  
Նա միշտ այնտեղ է:

Աչքերիդ մթնշաղում պատկերվել է նա,  
Դու հուզված ես,

հարրած,  
ըմբոստ:

Կարոտի քարը նետում ես նրան:  
Վերադարձը անկարելի է:  
Կոպերդ ծանրանում են հոգնած,  
Միրտը երգում է

երգ,  
քարի երգ,  
երազի,  
կարոտի...

Դու շատ մոտ ես նրան:  
Վազիր շունչդ պահած,  
Կհասնես:

Անապատ  
Հավիտենական անապատ  
Տանում են նրանք  
Ուսերի վրա  
Մաշված դեմքի մի պատկեր:  
Անապատ է  
Տազնապ  
Տապ  
Մարդու հոգում  
Տիեզերքը թանձրացել  
Հորդում է  
Պատկերի վրա...



ԵՐԳԻՐ ԿՐՈԹԵԼՈՒ ՓՈԽԱՐԵՆ

Երգիր աղոթելու փոխարեն,  
Թող քարը պայթի քո ձայնից.  
**Երգի՛ր,**  
**Մի՛ աղոթիր:**  
**Երգի՛ր ուռած շրթունքով,**  
                        խոպտած ձայնով:  
**Տխուր երգը մի՛ երգիր,**  
**Երգի՛ր ամուր կանգնած հողին,**  
**Թող լսեն քեզ:**  
**Հավաքիր շուրջ մանուկներին,**  
**Երգելով սնիր նրանց վճիտ հոգին:**  
**Կաքը բույն է:**  
**Մոռացի՛ր:**  
**Երգի՛ր,**  
**Ահեղ երգի՛ր:**  
**Թող աշխարհը ցնծա քո երգից:**

**Մայր,**  
**Մեխված խաչերի առաջ մի՛ աղոթիր,**  
**Խնդության օր է:**  
**Անեծքի փոխարեն**  
**Վե՛ր կաց,**  
**Կանգնիր,**  
**Ուղղի՛ր մեջքդ,**  
**Շրբունքներիդ հողը թափ տուր,**  
**Թող ծիլ ոսքերիդ տակ:**  
**Քորիկ կոխիր հողը,**  
**Մաշված ծնկներդ դեռ ուժասպառ չեն դարձել:**  
**Նայի՛ր զավակներիդ,**  
**Ինչպես են խաղում հրդեհի հետ:**  
**Կրակը մի՛ մարիր քո աչքերի թացությամբ,**  
**Թեքի՛ր հայացքդ դեպի մեզ,**  
**Ծիծաղիր ամբողջ սրտով,**  
**Տե՛ս, թե ինչպես ենք կառչել հողին...**

**Երգի՛ր,**  
**Երգի՛ր,**  
**Երգի՛ր,**  
**Երկինքը մերկանում է**  
**Նայիր վեր:**  
**Երկնքում համբարձվում են նրանք**  
**մեր աչքերի առաջ,**  
**Մի՛ շփոթվիր:**  
**Երգի՛ր,**  
**Թող աչքերը թացվեն**  
**Փակ ավետարանների վրա:**  
**Երգի՛ր ուժեղ:**  
**Անդրդվելի:**  
**Կուրծքդ պինդ պահիր:**  
**Օ՛, երգիր չերգված երգեր:**  
**Թող լույսը թափանցի**  
**մարված ոգիների մեջ:**  
**Երգի՛ր երկնաքոհիչ երգերի երգը,**  
**Թող թարձրանան ձեռքերը**  
**Դեպի երկինք:**

**Արյունոտ ավետարանները**  
Դուրս քաշեցի երազների աշխարհից,  
Մեկ-մեկ դարսեցի իրար վրա  
Օժեցի աստղերի ցոլքով...

**Կանաչ դաշտում**  
Երկու նժույգ  
Իրար դիմաց  
Գրոհեցին սլացող նետերի նման...  
Օդը սուրաց:

**Մատներիս զարկերակի մեջ**  
Ծոշափացի կամարները վանքի:  
Մի հառաջանք  
Կղզիացավ  
Բուրվառների անոթի մեջ:

**Աշխարհը կանգնել է պատվանդանին**  
Փետրաթափ թռչունի գլխով  
Բացում է թևերը  
աշխատում է սլանալ...

**Դիակների կույտերի վրա**  
Քափվում են բառեր,  
Հիսուված բառեր,  
Եվ գորշ շրբունքներից բամվում  
հոգնած տաճարների վրա...

**Թիվ,**  
**Թվեր,**  
Կորած ծննդյան թվականներ,  
Ցցված են հայացքների խորության մեջ...  
**Մեղքը ծանրանում է,**  
Լվանում երկնքի փոշակալ դեմքը...  
Բազմանում են բառերը,  
ու հանկարծ պայթում...

Կանգնել ենք անպարտելի  
Հրթիռների շուրջ  
Քրտնաբոր ճակատներով  
Ու բռունցքը մեր կոշտացած  
Ծաղիկների մի փունչ է սեղմում:

Մեր հայացքը պարզ է  
Խոսքը կարձ.  
Չարախինդ ծիծաղ չունենք  
Այլ պարզ մի պահանջ:

Նահատակների մարմնի մոխիրով  
Օժել ենք մեր հոգին  
Կանգնել ենք ուղիղ  
Նայում ենք ձեր աչքերին  
Պահանջում ենք  
սեփականություն,  
ի՞ն:

Ապրիլ 15, 1986

Խոսում են բոլորը,  
Երիտասարդ,  
Ծեր...  
Վերակառուցել  
Մի նոր աշխարհ,  
Մի նոր հողամաս:  
Մտքեր,  
Միջոցներ,  
Օրագիր,  
Պահանջ:  
Ժամանակն է որ կերտենք  
Երկինք, երկիր, հող կանաչ,  
Նո՞ր գոյություն:  
Մտածում են բոլորը  
Ճամփաները ինչպես լույսով լցնել,  
Լույսը ինչպես քանդակել քարերի դեմքին,  
Քարերը ինչպես աճնենել,  
Շատանան,  
Շատրվանների նման:  
Ինչպես կուտակել, դարսել,  
Քարը տուն դառնա:

Հորիզոնից դուրս գալ,  
Արևների մեջ քայլել...  
Սահմանները քանդել,  
**Քայլել:**  
Յնորքների բոցաշունչ նժույգ հեծած  
Թմբկահարել արևի ձգված կաշին...  
Մեղուների փեթակի շուրջ  
Պտտվել, պտտվել...  
Չայնի ուղղությամբ քայլել,  
Դուռը քակել անծանոթի,  
Համբուրել շրջուները ծարավ...  
Դուրս գալ սահմաններից,  
Ծիծաղել,  
Լացել,  
Աղոթել,  
Մի բուռ հողի համար:

Մտածում ենք կյանքի հրաշքի մասին  
Հողի,  
Արևի, լույսի:  
**Քանդում ենք շրջագծերը**  
Սահմանները ջնջում:  
  
Նրանք խեղդում են լույսը,  
Խելագարված մրճահարում շղթաները երկար,  
Կաշկանդում են ծիծաղը հողի,  
Փակում են փեղկերը երկնքի,  
Ջնջում են պատուհանները կապույտ,  
Ու սարդի ոստայնում շրջագծվում...

Մենք, աշխարհի հողմերին հեծած  
Սլանում ենք լույսի արեգակներում...

Հուլիս 1985

**Հորիզոնի մամոռտած պատերին**  
**Կմախրացած աստղերի հոգևարքի ընթացքին**  
**Խառնվել են իրար**  
**Մարդ, գազան, մերենա,**  
**Դարձել են մի կույտ**  
**Երկար, արյուն, ոսկոր...**  
**Քիբերը սևացել, սառել են:**  
**Ողջ տիեզերը**  
**Դարձել է խառնատեսիլ մի կույտ:**  
**Անվերադարձ արձագանքը**  
**Եվ մահվան տրտմությունը**  
**Չարկվում են իրար:**  
**Փոշի, երկար, արյուն**  
**Գամվել են իրար:**  
**Պատերին մնացել են**  
**Ցամաքած ձեռքերի հուշեր,**  
**Սև քժեր...**

**Մոռացի՛ր**  
**Լացը:**  
**Ժպիտը շրթիդ դիր,**  
**Շոշափիր լույսը,**  
**Փթթիր կանաչով:**  
  
**Մոռացի՛ր**  
**Ճավը:**  
**Գաժանությունը:**  
**Ծնի՛ր նոր երազ**  
**անմահության երգի մեջ:**  
  
**Մոռացի՛ր շիկացած երկարը**  
**Պապերիդ կողքին խրված,**  
**Փշաբազը մորդ ճակատին,**  
**Մոռացի՛ր:**  
  
**Ժխտի՛ր կապանքները բոլոր,**  
**Շղբաների խոլ շառաչումը**  
**ոսկորներիդ, կաշվիդ վրա:**

**Անտեսի՛ր**  
**Երկինքը,**  
**Երկիրը,**  
**Հող,**  
**Հորիզոն,**  
**Մոռացի՛ր գետերը արյունաշունչ,**  
**Կավե տները քանդված**  
**հրդեհից,**  
**անեծքից:**

**Ափիդ վարդի վնաշեր դիր,**  
**Հոգուդ մեջ լույսի շատրվաններ,**  
**Կյանքը սահման չի ճանաչում...**